ԴԱՍ 11.
Մարդը և Սուրբ Հոգու աշխատանքը

Ներածություն

Բանալի համարներ

ՄԱՍ 11.1 Սուրբ Հոգու նկարագրություն

ՄԱՍ 11.2 Սուրբ Հոգու աշխատանքը աշակերտի անձնական կյանքում

ՄԱՍ 11.3 Չորս պատճառներ, թե ինչու Սուրբ Հոգու կարիքն ունենք

ՄԱՍ 11.4 Պարգևները և պտուղը

ՄԱՍ 11:5 Սուրբ Հոգին և եկեղեցին

Ամփոփում և կիրառություն

Աստվածաշնչյան ուսումնասիրություն

Սուրբ զգացմունքներ

Նշումների համար

Ներածություն

Սուրբ Հոգին անորոշ ազդեցություն կամ խորհրդավոր միտք չէ: ***Նա անձ է***: Նա աստվածային Երրորդության մի անձն է:

Նա կարող է հաղորդակցվել և հայտնել Իրեն մեզ: Մենք Նրան տեսնել չենք կարող, բայց Նա մեծ ազդեցություն կարող է ունենալ մեր կյանքում՝ մեր ներսի մարդու միջոցով:

Հայր Աստծո և Որդի Աստծո նման Սուրբ Հոգին.

- Հավիտենական է (Եբր. 9:14):
- Ներկա է ամեն տեղ (Սաղմ. 139:7):
- Ամենագետ է (Ա Կորնթ. 2:10):
- Ամենակարող է (Ղուկ. 1:35):

Նա ունի անձնական հատկանիշներ.

- Միտք (Հռովմ. 9:14):
- Կամք (Ա Կորնթ. 12:11):
- Զգացմունքներ (Եփես. 4:30):

Մեր կյանքի տարբեր պարագաներում Նա հաղորդակցվում է մեզ հետ, բաց է մեր առջև և ցանկանում է, որ մենք էլ Իր առջև բաց լինենք:

Յուրաքանչյուր հավատացյալ պիտի իմանա Սուրբ Հոգու և Նրա զորության իրականության մասին: Առանց Սուրբ Հոգու մեր ամենօրյա կյանքում երբեք չէինք ճանաչի Աստծո զորությունը: Հիսուս Քրիստոսի կյանքն ու զորությունը կդրսևորվի մեր կյանքում Սուրբ Հոգու միջոցով: Պողոսը գիտեր, որ հավատացյալներն այդ կարիքը ունեն, և հետևապես աղոթում էր.

> *«Սրա համար կրկնում եմ իմ ծնկները, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առջև, որից ամեն նահապետություն երկնքումն ու երկրումս անուն է առնում, որ Իր փառքի հարստության պես տա ձեզ, որ զորությամբ հաստատվեք, Իր Հոգու ձեռով ներսի մարդում, որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում»* (Եփես.3:14 –17):

Բանալի համարներ

Նշումների համար

Հովհ. 14: 15–22
Հովհ. 16:5–15
Ա Կորնթ. 12:1–11
Գ.Առ. 1:4–8
Ա Կորնթ. 2:9–16
Գաղատ. 5:16–26

ՄԱՍ 11.1
Սուրբ Հոգու նկարագիրը

Աստվածաշունչը Սուրբ Հոգուն նկարագրում է տարբեր ձևերով, օրինակ՝

I) Տարբեր անուններ

- Բարի Հոգի (Նեեմ. 9:20):
- Աստծո Հոգի (Մատթ. 3:16):
- Մխիթարիչ (Հովհ.14:16, 26):
- Ճշմարտության Հոգի (Հովհ. 16:13):
- Քրիստոսի Հոգի (Հռովմ. 8:9):
- Որդեգրման Հոգի (Հռովմ. 8:15):
- Շնորհքի Հոգի (Եբր. 10:29):

II) Խորհրդանիշներ

- Աղավնի (Մաթ. 3:16):
- Ձայն (Գ Թագավ. 19:12):
- Կնիք (Եփես. 1:13):
- Ջուր և կենդանի ջուր (Ես. 44:3, Հովհ. 7:37–39):
- Քամի (Գործք 2:2):
- Յուղ (Ա Թագավ. 16:13):
- Կրակ (Գործք 2:3):

Նշումների համար

ՄԱՍ 11.2
Սուրբ Հոգու աշխատանքը աշակերտի անձնական կյանքում

Հիսուսը Գ. Առ.1:18 խոսքում բացատրում է Իր աշակերտներին, որ Աստծո թագավորությունը կդրսևորվի Սուրբ Հոգու գալուստով: Գործնականում սա նշանակում է.

- Նա ընդունակ կդարձնի մեզ դևեր հանելու (Մատթ. 12:28):
- Նա կօգնի մեզ խոսել այն, ինչ Աստված է ուզում, որ խոսենք (Մարկ. 13:11):
- Նա կօգնի, որ վերստին ծնվենք (Հովհ. 3:5–8):
- Նա ապրում է մեր մեջ (Հովհ. 14:17):
- Նա սովորեցնում է մեզ (Հովհ. 14:26; 16:13,14):
- Նա հանդիմանում է (Հովհ. 16: 8–11):
- Նա մեզ զորություն է տալիս Հիսուսի վկաները լինելու համար (Գ. Առ.1:8):
- Նա մեր հոգու հետ վկայություն է տալիս, որ մենք Աստծո որդիներ ենք (Հռովմ. 8:16):
- Նա հնարավոր է դարձնում, որ Աստծո սերը լցվի մեր սրտերի մեջ (Հռովմ. 5:5):
- Նա օգնում է մեզ մեր տկարությունների ժամանակ (Հռովմ. 8:26):
- Նա հնարավոր է դարձնում, որ ուրախությունը, արդարությունը, և խաղաղությունը գան մեր մեջ (Հռովմ. 14:17):
- Նա օգնում է, որ լցվենք ուրախությամբ, խաղաղությամբ և հույսով (Հռով, 15:13):
- Նա սրբացնում է մեզ (Հռովմ. 15:16):
- Նա մեզ պարգևներ է տալիս, ինչպես որ Ինքն է որոշում: (Ա Կորնթ. 12:11):
- Նա Սուրբ Հոգու պտուղները մեր մեջ է բերում (Գաղ. 5:22,23):
- Նա մեր կյանքին ուրախություն է տալիս (Ա Թես. 1:6):

Նշումների համար

ՄԱՍ 11.3
Չորս պատճառներ, թե ինչու Սուրբ Հոգու կարիքն ունենք

I) Վերստին ծնվելը

Մարդը մոլորվել է և չի ճանաչում իր իսկական Հորը: Սուրբ հոգին մեկն է, որ ցույց է տալիս մեզ մեր հոգևոր կարիքը և առաջնորդում Հիսուսի մոտ: Նա դարձի է բերում մարդուն Աստծո մոտ (Հովհ. 16: 5–15): Սուրբ Հոգու միջոցով դառնում ենք Աստծո որդիներ, ապրում ու գործում որպես Նրա ընտանիքի անդամ:

II) Ապրելը

Մեր մեջ ապրելու զորություն կա: Աստված ճանաչեցնում է մեզ Իր զորությունը, որպեսզի կարողանանք շարունակաբար ապրել հավատքի կյանքը՝ մյուսների համար օրինակ լինելով: Գիտենք, որ մեր մարմինը տկար է, բայց մենք մենակ չենք: Աստված մեր առջև բացել է աստվածային զորության աղբյուրը՝ Նա Իր Սուրբ Հոգով ապրում է մեր մեջ (Եփես. 3:16, 17, Հռովմ. 8:11):

III) Հաղթանակել

Ամեն քրիստոնյա ապրում է պատերազմի դաշտում: Մինչ քրիստոնյա դառնալը մենք Սատանայի կողմից էինք, բայց երբ ընտրեցինք հետևել Հիսուսին, տեղափոխվեցինք հաղթող կողմը՝ Աստծո կողմը (Եփես. 2:1–5, Կողոս. 1:13): Պայքարը Սատանայի դեմ մեծանում է, երբ սկսում ենք հավատալ, քանի որ նա ձգտում է խանգարել, որ չհետևենք Հիսուսին: Սուրբ Հոգու միջոցով Աստված Իր զորությունը հնարավոր է դարձնում մեր մեջ, որպեսզի պարտության մատնենք Սատանային (Ա Հովհ. 4:4):

Նշումների համար

IV) Վկայելը

«Բայց դուք զորություն կառնեք, երբ Հոգին ձեր վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմումը և բոլոր Հրեաստանի և Սամարիայի մեջ, մինչև երկրի ծայրերը» (Գ. Առ.1:8):

Զորություն բառը հունարեն ***դունամիսն*** է, որից էլ կազմված է անգլերեն *դինամիտ* բառը: Աստված կամենում է, որ լցվենք այդպիսի զորությամբ, որ կարողանանք վկայել Հիսուսի մասին: Սուրբ Հոգին մեզ ընդունակ է դարձնում, որ վկայենք Խոսքով, գործերով և մեր կյանքով (Հռովմ. 15:18–19): Սա նշանակում է, որ երբ խոսում, աղոթում և ծառայում ենք մարդկանց Սուրբ Հոգու զորությամբ, նման է, որ Հիսուսն է ծառայում նրանց (Գ. Առ. 4:31, Բ Կորնթ. 2:4–16; Հովհ. 14:12):

ՄԱՍ 11.4
Պարգևները և պտուղը

Նշումների համար

Աստված ոչ միայն ցանկանում է մեծ բաներ անել մեզանով, այլ նաև ուզում է մեծ բաներ մեզ տալ:

> *«Ամեն բարի պուրք և ամեն կատարյալ պարգև, վերևից է իջնում, լույսի Հորից»* (Հակ.1:17):

I) Հոգու պարգևները

Հոգու պարգևները գերբնական են: Անգամ մեր բնական պարգևները պետք է նվիրենք Աստծուն, որպեսզի այն մաքրվի ու սրբվի՝ Իր փառքի համար գործածելու: Սուրբ Հոգին պատրաստում է մեզ, որպեսզի կարողանանք կատարել Աստծո կամքը, փառաբանենք և ծառայենք Նրան: Պարգևները, որոնք գրված են Ա Կորնթ. 12:7–11–ում և Հռովմ. 12: 6–8–ում, օգնում են մեզ հասկանալ, թե ինչ նպատակով և ինչպես պետք է այն գործի եկեղեցում: Հայրը վստահեցնում է, որ որդիները Իր կամքն ու նպատակը կատարելու համար ոչ մի բանի պակաս չեն ունենա, և այստեղ՝ երկրի վրա, կկարողանան վկայել Հիսուսի սիրո և զորության մասին:

> *«Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգտի համար»* (Ա Կորնթ. 12 :7):

II) Հոգու պտուղը

Պտուղն այնքան կարևոր է, որքան պարգևները: Հոգու պտուղը Սուրբ Հոգու աշխատանքի վկայությունն է: Մեր կյանքի վկայությունը շատ կարևոր է: Գաղ. 5:22, 23–ում գրված պտուղի որակների ցանկը արտահայտում է Հիսուսի էության հատկանիշները: Սուրբ Հոգին Իր պտուղի սերմն է դնում մեր կյանքում, և մեզանից է կախված Նրան արձագանքելը: Նրա սուրբ ներգործության առջև պիտի բացվենք, որպեսզի ավելի ու ավելի նմանվենք Հիսուսին մեր դիրքի և վարմունքների մեջ:

> *«Բայց ասում եմ ձեզ Հոգով գնացեք և մարմնի ցանկությունները չեք կատարի»* (Գաղ. 5:16):

Նշումների համար

ՄԱՍ 11.5
Սուրբ Հոգին և եկեղեցին

Աստծո նպատակը եկեղեցին է, որ երևան եկավ Սուրբ Հոգով: Սուրբ Հոգու լեցունությունից հետո Գործքի 2-ում տեսնում ենք եկեղեցու աճն ու զարգացումը: Ստորև բերվածները Սուրբ Հոգով առաջնորդված եկեղեցու բնութագրերն են, ինչպես այդ նշված է Գ. Առ. 2:41-47-ում.

- Մոտ 3000 հոգի ապաշխարեց և մկրտվեց:
- Նրանց ուսուցանել էին առաքյալները:
- Նրանք հաղորդակցություն ունեին և հոգ էին տանում միմյանց համար:
- Նրանք տոնում էին Տիրոջ ընթրիքը, որի կենտրոնում Հիսուսի զոհաբերությունն էր:
- Հրաշքներ և նշաններ եղան:
- Ամեն ինչը հասարակաց էր:
- Մի քանիսը վաճառեցին իրենց ունեցվածքը և բաժանեցին աղքատներին:
- Նրանք պարբերաբար ժողովներ էին անում:
- Ուրախ էին և Աստծուն էին փառաբանում:
- Նրանք ուրախանում էին բոլոր մարդկանց ներկայությամբ:
- Տերը շատացնում էր նրանց ամեն օր:

Եկեղեցու պատմության մեջ Սուրբ Հոգու կրակը բազմիցս մարել է, բայց երբ եկեղեցին սկսել է աղոթել Սուրբ Հոգու թարմ լեցունության համար, Տերը արթնություն է բերել եկեղեցում: Նման արթնությունից հետո նորից նույն բնութագրերը ի հայտ են գալիս:

Սուրբ Հոգու զորավոր և վերականգնող աշխատանքից հետո Քրիստոսի եկեղեցին այսօր էլ կա և աճում է ամբողջ աշխարհում: Հոգու պարգևները տրվում են այս յուրահատուկ նպատակով:

Ամփոփում և կիրառություն

Նշումների համար

1. Սուրբ Հոգին ուզում է դառնալ մեր խորհրդատուն և առաջնորդել մեզ Հիսուսի և Հայր Աստծո մոտ:

2. Սուրբ Հոգին օգնում է մեզ Աստծո կամքը կատարելու մեջ:

3. Սուրբ Հոգին օգնում է մեզ նմանվել Հիսուսին:

4. Սուրբ Հոգու միջոցով եկեղեցին արքնություն է ապրում, սկսում է աճել և դառնալ աշխարհի լույսը:

Այս բաժնի կարևոր թեման Սուրբ Հոգու գործն է: Սուրբ Հոգին ուզում է մեր ներաշխարհը վերափոխել, որպեսզի Իր պտուղը դրսևորվի: Եվ Նա գործ ունի նաև զգացմունքային աշխարհի հետ: Հաջորդ աստվածաշնչյան ուսումնասիրությունը *Սուրբ զգացմունքներ* թեմայով է, որտեղ կքննարկենք, թե ինչպես է Աստված վերափոխում մեր զգացմունքային աշխարհը:

Նշումների համար

Աստվածաշնչյան ուսումնասիրություն
Սուրբ զգացմունքներ

Ինչո՞ւ է այդքան դժվար ղեկավարել մեր զգացմունքները:

Այս հարցը հաճախ է հետաքրքրում մեզ: Գիտենք՝ որն է ճիշտ և որը՝ սխալ, և թվում է, թե անկարելի է ճիշտն անել: Նախորդ ուսումնասիրություններում տեսանք, որ դա իրական է մեր մտքի և կամքի համար: Այս ուսումնասիրությունով ցանկանում ենք ավելի մանրամասն դիտարկել մեր զգացմունքները:

Կարևոր է իմանալ, որ մեր վարքը մեծամասամբ ղեկավարվում է մեր զգացմունքների կողմից:

Մենք բոլորս ծնվում ենք զգացմունքներով, և այն մեր էության բաղկացուցիչ մասն է կազմում: Հիսուսն ուներ զգացմունքներ, բայց երբեք դրանցով չէր առաջնորդվում:

Խնդիրը կայանում է նրանում, որ հաճախ մեր զգացմունքներն են վերահսկում մեզ, այնինչ մենք պետք է վերահսկենք դրանց:

Զգացմունքային նորոգությունը մի գիշերվա ընթացքում տեղի չի ունենում: Դա ընթացք է:

Աստվածաշնչյան այս ուսումնասիրության մեջ ավելի խորը կուսումնասիրենք մեր զգացմունքային աշխարհը: Մենք կդիտարկենք հետևյալ կետերը.

- Ինչ է զգացմունքը:
- Զգացմունքները բացահայտում են մեր սրտի դիրքը:
- Զգացմունքները արթնանում են:
- Զգացմունքները թելադրում են մեր արարքը:
- Հիսուսի զգացմունքները:

Ինչ է զգացմունքը

Նշումների համար

1. ***Զգացմունքները ինքնաբուխ ռեակցիաներ են, որոնք բորբոքվում են հետևյալ կերպ.***

- Զգացմունքների միջոցով որևէ բան ընկալելիս:
- Ինչ–որ մի կոնկրետ բանի մասին մտածելիս:

Եվ կարող են պայմանավորված լինել.

- Անցյալի փորձառություններով:
- Չափազանց շատ զգայունությամբ:

Ոչ բոլորն են զգացմունքները միանման արտահայտում: Մարդիկ բաժանվում են երկու խմբի՝ ***արտահայտվողներ*** և ***չարտահայտվողներ***: ***Արտահայտվող*** մարդը ավելի շատ է հետաքրքրվում իր շուրջ կատարվածով և դժվար է թաքցնում իր զգացմունքները, իսկ ***չարտահայտվող*** մարդը ավելի շատ զսպում է իր զգացմունքները՝ մյուս մարդկանցից խուսափելով:

Աստված ստեղծեց մեզ զգացմունքներով: Կյանքն առանց զգացմունքների այնքան տխուր կլիներ, որքան աշխարհն առանց գույների: Աստված մեզ տվել է անհատականություն և չի կամենում, որ բոլորս նույնը լինենք: Նա ուզում է, որ մեր զգացմունքները ճիշտ ղեկավարվեն:

Նշի՛ր մի քանի զգացմունքներ.

_____

_____

_____

_____

Նշումների համար

Զգացմունքները բացահայտում են մեր սրտի դիրքը

2. ***Զգացմունքները ցույց են տալիս մեր ներքին մարդու դիրքը՝ մեր սիրտը:***

Կարդա՛ Ղուկ. 6:45–ը և լրացրո՛ւ բացթողումները.

Բարի մարդն _____

_____ *է բխում, և չար մարդն*

_____ *է*

բխում, որովհետև _____

_____ *խոսում է նրա բերանը:*

Զգացմունքները մեր ներքին մարդու ջերմաչափն է: Այն արտահայտում է սրտի վիճակը: Զգացմունքները ինքնին մեղավոր չեն, այլ այն բաները, որոնք տեղ են գտնում մեր սրտում, կարող են մեղավոր լինել:

Որպեսզի մեր զգացմունքները նորոգվեն, կարևոր է, որ մեր ներքին *հայը՝* մեր սիրտը, նորոգվի:

Զգացմունքներն արթնանում են

3. ***Ինչ-որ դեպք, ինչ-որ խոսք կամ ինչ-որ մեկը մեր զգացմունքները շարժվելու պատճառ է հանդիսանում:***

Կարդա՛ հետևյալ համարները: Երկու համարներում էլ ***զգացմունքներ*** բառը գործածվում է, բայց ***տարբեր շարժառիթներով***:

Նշումների համար

Նշի՛ր զգացմունքը և պատճառը.

		Զգացմունք	Պատճառ
ա)	i) Ա Հովհ. 4:7	_____	_____
	ii) Բ Տիմ. 4:10		_____
բ)	i) Մարկ. 3:5	_____	_____
	ii) Ծնն. 4:5		_____
գ)	i) Հռովմ. 5:1	_____	_____
	ii) Հոբ 21:13,14		_____
դ)	ii) Եբր. 2:15	_____	_____
ե)	i) Հովհ. 11:35	_____	_____
	ii) Մարկ.10:22		_____

Այս համարները ցույց են տալիս, որ մեր զգացմունքները կարող են արթնանալ տարբեր պատճառներով: Օրինակ՝ Ա Հովհ. 4:7–ում ***ագապէ*** բառը նկատի ունի այն սերը, որով ներշնչված լինելով Աստծուց՝ սիրում ենք մեկս մյուսին: Բայց 2 Տիմ. 4:10–ում գործածված բառը արտահայտում է աշխարհի հանդեպ ունեցած սերը:

Նույնապես կարող են լինել բարկությունը, խաղաղությունը, վախը, վիշտը և այլն. ինչպես բարի և մաքուր շարժառիթներով, այնպես էլ մարմնավոր, մեղավոր և անմաքուր:

Նշումների համար

Զգացմունքները թելադրում են մեր արարքը

4. ***Զգացմունքները զգալի ազդեցություն ունեն մեր վարքի վրա:***

Առակ. 4:23–ն ասում է.

> *«Ամեն բանից առավել զգուշացիր քո սրտից, որ նրանից է կյանքի ելքը»:*

Կարդա՛ հետևյալ համարները և նշի՛ր՝ որ զգացմունքի մասին է խոսում, որն է դրանից բխած արարքի հետևանքը, և որն է շարժառիթը:

ա) Ծնն. 3:6

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

բ) Ծնն. 4:5–8

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

գ) Ծնն.37:4

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

դ) Բ Թագ.11:2–5

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

ե) Նեէմ.1:4

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

Նշումների համար

գ) Ղուկ. 10:33, 34

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

է) Հովհ.13:1, 5

- Զգացմունք: _____
- Արարք: _____
- Պատճառ: _____

Սրանք մի քանի օրինակներ են Սուրբ Գրքից, որոնք ցույց են տալիս, որ թե՛ դրական, թե՛ բացասական զգացմունքները առաջնորդում են արարքի:

5. *Հարց 4–ի կիրառումը.*

ա) Ո՞ր զգացմունքն է ամենաշատը անհանգստացնում քեզ.

_____

բ) Մտաբերի՛ր մի առանձնահատուկ պարագա, որտեղ ցուցաբերել ես կոնկրետ այդ զգացմունքը.

_____:

գ) Ո՞րն էր արարքի հետևանքը.

_____

Հիսուսի զգացմունքները

6. Ակնհայտ է, որ ամենօրյա կյանքում բոլորս միևնույն զգացմունքային արձագանքը չենք ունենում տեղի ունեցած պատահարի կամ դեպքի վերաբերյալ: Մասնավոր դեպքում մեկն արձագանքում է բարկությամբ, իսկ մյուսը՝ այլ կերպ, մեկը ուրախ է՝ նորությունն իմանալով, մյուսը՝ ոչ, մեկը վախենում է, մի ուրիշը՝ ոչ:

Իրեն շրջապատող մարդկանց համեմատ Հիսուսը շատ հանգիստ այլ կերպ էր արձագանքում:

Նշումների համար

Ո՞րն է Հիսուսի արձագանքը, և ո՞րն է մյուսների արձագանքը հետևյալ համարներում.

ա) Մատթ. 8:23–27

- Աշակերտները _____

_____

- **Հիսուսը** _____

_____

բ) Մատթ. 19: 13–15

- Աշակերտները _____

_____

- **Հիսուսը** _____

_____

գ) Մատթ. 19: 21, 22

- Հարուստ պատանին _____

_____

- **Հիսուսը** _____

_____

դ) Ղուկ. 7:36–50

- Փարիսեցիները _____

_____

- **Հիսուսը** _____

_____

ե) Ղուկ. 19:37–42

- Ժողովուրդը _____

_____

- **Հիսուսը** _____

_____

Նշումների համար

զ) Ղուկ. 49–51

- Աշակերտները _____

_____

- **Հիսուսը** _____

_____

է) Ղուկ. 23:33–34

- Զինվորները _____

_____

- **Հիսուսը** _____

_____

Ի՞նչ կասես քո զգացմունքների մասին: Դու կնմանվեիր Հիսուսի՞ն, թե՞ այն մարդկանց, որոնցով շրջապատված էր Նա:

Ինչպես կարող են մեր զգացմունքները նմանվել Հիսուսի զգացմունքներին

Դա հեշտ ընթացք չէ: Տե՛ս Առակ. 16:32–ը: Մեր սեփական կարողությամբ երբեք չենք կարողանա այդ անել: Փոխելն այլ կերպ հնարավոր չէ, եթե ոչ միայն Սուրբ Հոգու զորությամբ:

Մի քանի անհրաժեշտ կետեր, եթե ուզում ենք մեր զգացմունքները փոխվեն.

- Եղի՛ր անկեղծ, ընդունի՛ր, որ կա այդ զգացմունքը:
- Սխալ զգացմունքը խոստովանի՛ր Աստծուն և ներո՛ւմ խնդրիր:
- Թո՛ւյլ տուր, որ Հիսուսը նորոգի քո սիրտը:
- Քայլի՛ր Հոգով:

Նշումների համար

Ընդունիր, որ կա այդ զգացմունքը

7. Մի՛ արդարացրու քեզ՝ ասելով. «դա իմ բնավորությունն է» կամ «չեմ կարող փոխվել, ես այսպիսին եմ»: Որպես Աստծո զավակ՝ անկե՛ղծ եղիր երկնավոր Հոր հետ և ինքդ քեզ հետ: Կարդա՛ Սաղմ. 42 և գրի՛ր՝ ինչ է անում սաղմոսերգուն իր զգացմունքների հետ:

Անմաքուր զացմունքները գալիս են.

- Չար սրտից (Ղուկ.6.45):
- Վնասված զգացմունքներից:

Վնասված զգացմունքները հատուկ հոգվական խնամակալության կարիք ունեն, որը չի մտնում այս ուսուցումների մեջ:

Խոստովանիր սխալ զգացմունքներդ և ներում խնդրիր

8. ***Որպեսզի փիրապետվենք զգացմունքներին, կարիք ունենք խոստովանել մեր սխալ զգացմունքները Աստծո առջև և ներում խնդրել:***
Սա տեղ է պատրաստում մեր կյանքում Սուրբ Հոգու գործունեության համար.

- Ո՞րն է Աստծո խոստումը Ա Հովհ. 1:9–ում:

- Ո՞րն է արդյունքը: Կարդա՛ Սաղմ. 32: 3–5,11–ը:

Ներումը վերանորոգում է մեր մեջ ուրախությունն ու խաղաղությունը, բայց մենք այնքան ենք հոգնում, երբ անընդհատ սխալ ենք գործում: *Մեր ներքին անչը և զգացմունքները սեփական կարողությամբ փոխելու փորձը մեզ հիասթափեցնում և ուժասպառ է անում:*

Նշումների համար

Ահա թե ինչու է հետևյալը կարևոր.

Թո՛ւյլ տուր, որ Հիսուսը նորոգի քո սիրտը

9. Կարդա՛ Մատթ. 11:28.

- Ո՞ւմ հրավիրեց Հիսուսը: _____
- Ի՞նչ ասաց, որ կարող ես անել: _____
- Ի՞նչ խոստացավ Հիսուսը: _____

10. Կարդա՛ Մատթ. 11:29.

- Ի՞նչ կարող ենք սովորել Հիսուսից: _____
- Ի՞նչ կստանանք այդպես անելով: _____

11. Կյանքիդ մեջ կա՞ն զգացմունքներ, որ կուզեիր Հիսուսը նորոգեր.

❍ Այո:
❍ Ոչ:

Գրի՛ր դրանք.

_____

_____

_____

Պատրա՞ստ ես, որ Հիսուսը սովորեցնի քեզ խոնարհություն և հեզություն.

❍ Այո:
❍ Ոչ:

Նշումների համար

Նվիրման աղոթք բեր Հիսուսին: Միայն Հիսուսը կարող է մեզ տալ նոր սիրտ, որը կարտահայտի Իր մաքուր զգացմունքները:

12. Ո՞րն է Եզեկ. 36:26, 27–ի խոստումները.

_____

_____

_____

Վստա՛հ եղիր, որ Աստված քեզ հաղթություն է տվել

13. Ա Հովհ. 5:4–ն ասում է.

> *«Որովհետև ամեն ով աստվածանից է ծնված, հաղթում է աշխարհին, և սա է հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝* ***մեր հավատքը****»:*

Մեր զգացմունքները կնորոգվեն միայն հավատքով՝ Հիսուս Քրիստոսի կատարածի շնորհիվ: ***Մենք չպետք է վստահենք մեր զգացմունքներին, այլ հավատքով մեր անձերը պետք է ամբողջությամբ հանձնենք Քրիստոսին, հաղթությունը ակնկալենք Նրանից:***

- Կարդա՛ Փիլիպ. 4:13 : Ո՞վ է տալիս մեզ հաղթություն.

  _____

- Կարդա՛ Գաղ. 5:1: Ո՞րն է մեր նորոգության հիմքը.

  _____

- Կարդա՛ Գաղ. 5:6: Բացի 10–րդ հարցից, էլ ինչի՞ կարիք կա, որ ստանանք այս նորոգությամբ.

  _____

- Կարդա՛ 2 Կորնթ. 5:17–ը: Ի՞նչ է նշանակում կարողանանք Քրիստոսի մեջ լինել:

  _____

Աստծո Խոսքին հնազանդվի՛ր:

Նշումների համար

14. Կարիք չկա ամբողջ իրավիճակը հասկանանք, որպեսզի կարողանանք հավատալ Աստծո հաղթությանը:

Նորոգության և հաղթության մեջ ապրելը մեզանից է կախված:

- Կարդա՛ Ա Թես. 5:18: Ո՞ր պարագաներում է մեզ ասվում, որ շնորհակալություն հայտնենք.

_____

_____

- Կարդա՛ Հռովմ. 8:28–ը: Երբ սիրում ենք Աստծուն, ինչո՞ւ պետք է ամեն ինչում շնորհակալ լինել Նրանից.

_____

_____

_____

- Կարդա՛ Գ. Առ.16:25: Ի՞նչ ձևով Պողոսն ու Շիղան հաղթություն ձեռք բերեցին բացասական զգացմունքների հանդեպ.

_____

_____

_____

Այս քայլերը մեր կամքի որոշումն են:

Քայլել Սուրբ Հոգով

15. Աստծո Խոսքին հնազանդվելը տեղ է պատրաստում Սուրբ Հոգու գործի համար:

Կարդա՛ Սաղմ. 37:4, 30, 31, 40:9, 119:11, Առակ. 3:3, Երեմ. 31:33:

Նորոգված միտքը՝ մաքուր զգացմունքներով, կարտահայտի Հոգու պտուղը: Ահա թե ինչպես ենք մենք նոր էություն ստանում: Եվ մյուսները դա կնկատեն: Հոգու պտուղի շնորհիվ Քրիստոսի միտքը կհայտնվի մեր կյանքում:

Նշումների համար

Թվարկի՛ր Հոգու պտուղի առանձնահատկությունները, որոնք նշված են Գաղ. 5:22–ում և Կող.3:12–15–ում.

_____

_____

_____

_____

_____

_____

Պատասխաններ

Նշումների համար

1. Օրինակ՝ ուրախություն, ատելություն, խաղաղություն, բարկություն, սեր, շնորհակալ սիրտ, նախանձ, տրտմություն և այլն:

2. Տե՛ս Ղուկ. 6:45–ը:

3. ա) Սեր:
   i) Սեր, որ գալիս է Աստծուց:
   ii) Սեր աշխարհի հանդեպ:

   բ) Բարկություն:
   i) Փարիսեցիների անարդարության պատճառով:
   ii) Կայենը նախանձեց Աբելին:

   գ) Խաղաղություն:
   i) Խաղաղություն մեղքից ազատագրվելու համար:
   ii) Խաղաղություն, որ գիտակցելով մերժում ենք մեղքը:

   դ) Վախ:
   i) Աստծուց երկյուղ ունենալ:
   ii) Վախ մահից:

   ե) Տխրություն:
   i) Հիսուսը լացեց Ղազարոսի գերեզմանի մոտ:
   ii) Նա տխրեց, քանի որ Տերն ասաց, որ թողնի Իր հարստությունը:

4. ա) Ցանկություն:
   Կերավ պտուղը, անհնազանդ էր:
   Եվան զրույցի մեջ մտավ Սատանայի հետ:
   բ) Բարկություն:
   Սպանություն:
   Կայենը ողջակեզ մատուցելիս Աստծո հանդեպ լուրջ չէր:
   գ) Ատելություն:
   Նրանք չկարողացան բարի լինել:
   Հովսեփը Հակոբի սիրելին էր:
   դ) Ցանկություն:
   Կռապաշտություն:
   Դավիթը անտարբեր էր:

Նշումների համար

ե) Վիշտ:
Սկսում է աղոթել և ծոմ պահել:
Նեէմիան վատ լուրեր լսեց Երուսաղեմի մասին:

զ) Կարեկցել:
Գնացին նրա մոտ և օգնեցին նրան:
Տեսնում է մեկին, որը վիրավորված էր:

է) Սեր:
Հիսուսը լվանում է Իր աշակերտների ոտքերը:
Ուրիշ ոչ մեկը պատրաստ չէր դա անելու:

5. Անձնական նկատառումներ:

6. ա) Աշակերտները վախի և խուճապի մեջ էին:
Հիսուսը հանգիստ էր և ինչ–որ բան էր անում:

բ) Աշակերտները երեխաներին հեռացրեցին:
Հիսուսը սիրում է երեխաներին և օրհնում նրանց:

գ) Հարուստ պատանին տխուր է, քանի որ կառչում է իր հարստությունից:
Հիսուսը ամեն ինչ տալիս է:

դ) Փարիսեցիները ատեցին մեղավոր կնոջը:
Հիսուսը սիրում և ներում է նրան:

ե) Մարդիկ ուրախությունից աղաղակում են:
Հիսուսը տխուր է և լաց է լինում:

զ) Պետրոսը ականջ է կտրում:
Հիսուսը բժշկում է այն:

է) Զինվորները խաչում են Հիսուսին:
Հիսուսն ասում է. *«Հայր, ների՛ր նրանց, որովհետև չեն հասկանում՝ ինչ են անում»:*

Անձնական նկատառումներ:

7. Նա անկեղծորեն ասում է Աստծուն այն ամենը, որ զգում է. իր վիշտը, ուրախությունը և պայքարը:

8. • Որ եթե կամենում ենք խոստովանել, Նա պատրաստ է ներել և մաքրել:
• Ներումը վերականգնում է ուրախությունն ու խաղաղությունը:

9. • Բոլոր նրանց, որ հոգնած և բեռնավորված են:
• Արի Հիսուսի մոտ՝ ինչպես որ կաս:
• Նա հանգստություն կտա:

Նշումների համար

10. • Հեզություն և խոնարհություն:
    • Մեր հոգիների համար հանգիստ կգտնենք:

11. Անձնական նկատառումներ:

12. Նոր սիրտ և նոր հոգի: Նաև Սուրբ Հոգին, որ կտա մեզ նոր կյանք՝ նոր զգացմունքներով:

13. • Հիսուս Քրիստոսը:
    • Հիսուս Քրիստոսում ունեցած փրկությունը:
    • Հավատքը, որ արտահայտվում է սիրո միջոցով:
    • Նոր արարած:

14. • Բոլոր պարագաներում. թե՛ բարձր, թե՛ ցածր:
    • Նրանք, ովքեր ճանաչում են Աստծուն, գիտեն, որ ամեն ինչ բարու գործակից է նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն:
    • Նրանք աղոթում և երգեր էին երգում Աստծուն:

15. Տե՛ս Աստվածաշունչը: